

ԱՆՑԵԱԼ ԴԱՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿ

1897 թուի դեկտեմբեր ամսին Նոր-Նախիջևանումն էի: Պէտք եղաւ կարևոր գործով Բոստով գնալ և գրաւաճառ Բոմանովիչի խանութը մտնել, ուր զանազան հնութիւնների մէջ տեսայ և մի դանակ, որի կոթը յաղեղ էր, երկու ծայրերը արծաթապատ: Դանակի շեղբի վերայ հետեւեալ ոսկեգոյն արձանագրութիւնը կար. «ի վլլմն ԱէՏՔ վ.ԴՏԻՆ որ է պորրգ ս բ յէրուսաղեմայ և Կոստանդնուպոլսոյ. թվ. ՌՃԾԱ»:

Աւետիքը 1701 թուին Կ. Պօլսոյ պատրիարքը ընտրուեց և Նահապետ կաթողիկոսից օրհնութեան ու հաճութեան կոնդակ ստանալով Երզնկայից Կ. Պօլիս ուղևորուեց: Աւետիքը իւր վաղաճանօթ Շէյխ-իւլ-իսլամի հովանաւորութեան տակ ամենագործունեայ և ամենաեռանդուն պատրիարքը հանդիսացաւ: Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի խառնակ գործերին վախճան դնելու համար Աւետիքին յանձնուեց և Երուսաղէմի պատրիարքութիւնը:

Աւետիքի աշալուրջ կառավարութեան ժամանակ լատին կրօնաւորները չէին կարողանում արձակ համարձակ գործել. ուստի և նրանք, գաղղիացւոց դեսպանի միջոցով, 1703 թուին պաշտօնանկ անել տուին Աւետիքին, որը մի տարուց յետոյ նորից ստանձնեց պատրիարքութիւնը: Աւետիքին հովանաւորող Շէյխ-իւլ-իսլամի պաշտօնանկ լինելով 1705-ին ինքն, Աւետիքը ոչ միայն զրկուեց պատրիարքութիւնից, այլ և գաղղիացւոց դեսպանի դաւադրութեամբ արսոր ուղարկուեց և անդարձ կորաւ: Աւետիքի արսորումն ու անյայտ կորչելը առատ նիւթ է տուել բանասէրներին: Կարծողներ կան որ պատմութեան մէջ յայտնի Երկաթէ զիմակով մարդը Աւետիք պատրիարքն էր: Մի բան ուղիղ է, որ Աւետիքը իւր արսորումից 5 տարի յետոյ ծանր տանջանքների մէջ 1710 թուի սեպտեմբերին պաշտօնապէս ընդունելով կաթողիկոսութիւնը՝ 1711 թուին Յուլիսի 11-ին վախճանուեց Ֆրանսիայում (Նկեղ. պատ. Յ. վ. Մ. 1884. եր. 283—86):

1898 թուի Մարտի 16-ին Վարչախոյուն արշակունի
ի միջի այլոց, Թրեմտա Գոմինիկեան փողոցում լեհական
Սվենտի Եակսկի եկեղեցին: Այդ եկեղեցու ժողովրդական մա-
սում յատակին հաւասար տապանաքարերի մէջ ագուցած
արդրի տախտակի վերայ ուռուցիկ տառերով հին տապանա-
քարերից ընդօրինակուած հայերէն երկու տրձանագիր տեսայ:

Առաջինն է.

—Այս է սապան ողորմած հօգի մեծ խաթունին կո-
ղակցուն պարոն Յակովբին մայսեսի Մինասին որդուն
Եազովցա Բաղաֆին Երեսիոխանին. յանգեաւ ի Ք.ս. Թ.
ՌՃԻԶ. ամսօ ապրիլի 2 օրն ուրբադ:

Երկրորդն է.

—Այս է սապան պարոն Յակովբին մայսեսի Մի-
նասի որդուն Եազովցա Երեսիոխանին. յանգեաւ ի Ք.ս.
Թ. ՌՃԼԲ. ունիս ի . . :

Արձանագրերից չէ կարելի որոշ եղրակացնել Յակովբն է
եղել Եազովեց քաղաքի Երեսիոխանը թէ նրա հայր Մայ-
տեսի Մինասը: Ըստ իս՝ պէտք է որ Մայտեսի Մինասը եղած
լինի Երեսիոխան: Բայց պ. Յակովբն ու իւր կողակիցը ինչ
ծառայութեան համար արժանի են եղել թաղուելու Վար-
չախոյի լեհական եկեղեցում: Ահա մի խնդիր, որ պէտք է
լուսարանել:

Պ. Կարապետ Եղեանի «Բռնի միութիւն Հայոց Լեհաս-
տանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ» գրքի մէջ բերուած Հ. Պի-
դու-ի յիշատակարանից տեղեկանում ենք որ Եազովեցում
կար մի եկեղեցի՝ քաղաքամիջում, մի վանք և մի մատուռ՝
քաղաքից դուրս: Վանքն ու մատուռը թափուր էին միա-
բաններից: Պիդուի վկայութեամբ Եազովեցի հայ ժողո-
վուրդը ուրիշ քաղաքների հայերից աւելի փարթամ էին
և հեղամիտ, թէև ուսման և քաղաքավարութեան մէջ պա-
կասաւոր: Եազովեցում երեք կրօնաւորներ և հինգ քահա-
նայք կային: Քաղաքում կար ուսումնարան՝ ուր 50 հայ
մանուկներ խնամքով մարդւում էին կաթոլիկական հաւատ-
քով և բարեպաշտութեամբ, ուսանելով հայ և լատին լե-
զուները, անշուշտ՝ կաթոլիկութիւն ընդունելուց յետոյ:

Նայելով հոգևորականների թուին՝ պէտք է որ հայերը բազմաթիւ լինէին և, որպէս զի կարողանային արժանանալ Հ. Պիղուի «հեղամիտ» գովեստին՝ պէտք է որ այդ հայերը ամենից շուտ ընդունած լինէին լատին կրօնը: Եազլովեցը նշանաւոր էր և նրանով՝ որ ածնավաճառ ունէր և ածնաւաճառին հայերը խմբուում էին այնտեղ: Հ. Պիղու նկարագրում է Եազլովեցի հայերի դրութիւնը նրանց կաթողիկ դասնալուց յետոյ: Անշուշտ այդ ժամանակ չկար երեսփոխան Մայտեսի Մինասը, նրա որդի պարոն Յակովբի մասին էլ ոչ մի յիշատակութիւն չկայ:

Մինչև 1623 թիւը Լեհաստանի հայերը դեռ հաւատարիմ էին իրանց մայրենի եկեղեցուն: Մելքիսեդեկ կաթողիկոսի՝ Լեհաստանի հայերին չարաբաստիկ այցելութեամբ և Նիկոլ Թորոսովիչի ապօրէն ձեռնադրութեամբ սկիզբը դրուեց այն խռովութեանը, որ հետզհետէ զօրանալով՝ պատճառ դարձաւ հայերի կաթողիկական եկեղեցու հետ միանալուն՝ անջատուելով իրանց մայր եկեղեցուց:

Պ. Եղեանը առնելով Հ. Պիղուի ընդարձակ տեղեկութիւնից (Բռնի միութիւն, եր. 154) Նիկոլ Թորոսովիչի ձեռնադրութիւնը դնում է 1626 թուին (յառաջ. ծանօթ. եր. ԻԵ.): Նոյն Հ. Պիղու ժամանակակից պատմիչը գրում է. «Յամի Տեառն 1623 մեռաւ արքեպիսկոպոսն Իլվովայ, նախորդն Թորոսովիչի: Իբրեւ ամիսս ինչ թափուր մնացեալ էր աթոռն արքեպիսկոպոսութեան՝ եկն այսր կաթողիկոսն Էջմիածնի Մելքիսեդեկ: Եւ իբրեւ լինէին հակաճառութիւնք ի ժողովրդեանն թէ զո՞վ ընտրեսցեն՝ կաթողիկոսն, որպէս ասեն, կաշառեալ ոսկւով, հովանաւորեաց յիշատակեալն Թորոսովիչի, 22 ամաց, որ կղերիկոս էր ի ժամանակին և փակեալ զրամբք ձեռնադրեաց զնա եպիսկոպոս ի միում յեկեղեցեաց քաղաքիս, որ անուանեալ կոչի Վանական (Բռնի միութիւն, եր. 21): Սրանից երեւում է, որ Նիկոլը ձեռնադրուել է 1624 թուից ոչ ուշ:

Հայերը 26 տարի տոկունութեամբ զիմադրեցին թէ Նիկոլի բռնութիւններին և թէ լատին կրօնաւորների խաղաղաւնքներին: Հուսկ ուրեմն, կաթողիկոսութեան յարած Նի-

կողին սանձահարելու համար 1663-ին ղիմեցին Հաւատոյ ծաւալման ժողովին. 1664 թուին սեպտեմբերի 24-ին առաջին անգամ սկսուեց Իլիովի հայ եկեղեցում կաթուղիկոսի անունից առաջ յիշուել պապի անունը և այնուհետև ընդունուեց հիւանդաց օժման ու ս. հաղորդութեան բաժակին ջուր խառնելու կաթուղիկական վարդապետութիւնը:

Նիկոլ Թորոսովիչի գայթակղեցուցիչ վարք ու բարբից և բռնութիւններից աւելի դեր խաղաց Կղեմէս Գալանոսի ու Հ. Պիղուի խաղաղ գործունէութիւնը դպրոցական և քարոզչական ասպարէզներում: Հարկաւոր էին Նիկոլի պէս մի վատաբարոյ և փառասէր արքեպիսկոպոս՝ կրօնասէր հայերի առաջ նրանց մայրենի եկեղեցու դուռը փակելու համար և Կղեմէս Գալանոսի ու Հ. Պիղուի պէս շողոմարար ուսուցիչ և քարոզիչ՝ իւր առաջ փակուած իւր մայրենի եկեղեցուց վրդովուած հայերին լատինական եկեղեցին մանելու: Անշուշտ, Եպլլովեցի երեսփոխան Մայտեսի Մինասի որդի Յակովբն էլ աջակից է եղել Հ. Կղեմէս Գալանոսին ու Հ. Պիղուին և իբրև ազդեցիկ մարդ՝ իւր մեծ ծառայութեան համար յօգուտ հռովմէական եկեղեցու՝ իւր կողակցի հետ արժանի է եղել թաղուելու կաթուղիկ Լեհաստանի մայրաքաղաք Վարշաւայի Սվէնտի Եակսկի եկեղեցում: Հայերէն արձանագրութիւնը Լեհաստանի հայերի կորստեան ամենասրտաշարժ մահարձաններից մէկն է, որ ամեն մի հայի սիրտ դառնութեամբ է լցնում:

Համեմատութիւն. Աւետիք պատրիարքը հայ եկեղեցին կաթուղիկ քարոզիչների ոտնձգութիւնից զերծ պահելու համար աքսորի, տառապանքի և բանտարգելութեան մասնուեց. և ինքն միայն ինկվիզիցիայի տանջանքների տակ ընդունելով կաթուղիկութիւնը, կարճ ժամանակից յետոյ վախճանուեց. ինչ թւում է թէ նրա կաթուղիկութիւն ընդունելը՝ երեսանց էր, խղճահարութիւնը՝ սրտանց և մահը, որպէս փրկարար միջոց՝ խղճահարութիւնից ազատուելու:

Նիկոլը 22 տարեկան եպիսկոպոս դարձաւ ապօրինաբար. իւր մոլի և գայթակղական վարքով յուսահատեցրեց ժողովրդին. իւր դիւրբը պահելու համար՝ ապաւինեց կաթո-

լիկութեան. ժողովուրդը անարժան հովուի դէմ նոյն զէնքով մաքառել ուղեց: Անփառունակ մահով մեռաւ Նիկոլը 1681 թուին. իսկ Լեհաստանի հայք նրա փառասիրութեան զոհը դարձան:

Յ. ԽԿ. Մովսիսեան



ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա, Բ, Գ, Դ, 1900 թ.

(Вѣдомость А, Б, В, Г, 1900 г.)

Ա. Էջմիածնի Սինօղը իւրաքանչիւր տարի ներկայացնում է Ներքին գործոց նախարարութեան տեղեկագիր, որ բաղկացած է լինում չորս մասից և իւրաքանչիւր մասը կրում է վերոյիշեալ մի տառի անունը: Ա. մասը պարունակում է վիճակագրական տեղեկութիւններ մեր եկեղեցիների, վանքերի, ծխականների, հոգևոր ուսումնարանների և աստուածահաճոյ հիմնարկութիւնների մասին: Բ. մասը վերաբերում է կուսակրօն և ամուսնացած հոգևորականութեան: Գ. մասը նուիրուած է լինում մեր եկեղեցիների շարժական և անշարժ կայքերի վիճակագրութեան: Իսկ Դ. մասը պարունակում է տեղեկութիւններ վանքերի շարժական և անշարժ կայքերի մասին: Այս տեղեկագիրը պաշտօնական բնաւորութիւն ունի և կազմւում է հետևեալ կերպով: Իւրաքանչիւր վիճակային ատեան իր ստորագրեալ Հոգևոր ատեանների և անձանց միջոցով քաղում է չափաբերական մատեաններից, հաշուէմատեաններից և ծխատէր քահանաների կազմած ցուցակներից վերոյիշեալ տեղեկութիւնները և ներկայացնում Սինօղին, որն իր կողմից ուղարկում է Ներքին գործոց նախարարութեան: Այն տեղեկութիւնները, որոնք բարեխղճաբար քաղուած են չափաբերական մատեաններից, հաշուէմատեաններից և կամ կարողաւոր քահանաների խնամքով կազմած ցուցակներից բոլորովին ճիշդ են, իսկ նրանք, որոնք